

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորական ուղերձը
Ոստիկանության օրվա առթիվ

16.04.2020թ

Հարգելի ոստիկաններ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ ՀՀ Ոստիկանության օրվա
առթիվ:

Անուրանալի է ձեր դերը Հայաստանի Հանրապետության ներքին կյանքի կայունության
ապահովման, հասարակական կարգի պահպանության առումով: Ձեր աշխատանքային
բարձր պատասխանատվության շնորհիվ մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացի իրեն
պաշտպանված և ապահով է զգում:

Այսօր էլ մեր երկրում հայտարարված արտակարգ դրության պայմաններում դուք
շարունակում եք անգնահատելի ծառայություն իրականացնել՝ շուրջօրյա
հերթապահությամբ հնարավորինս կանխելով վտանգավոր իրավիճակը, որն արժանի է
գովեստի և երախտագիտության:

Ձեզ մաղթում եմ անվտանգ ծառայություն, աշխատանքային հաջողություններ և
երջանկություն անձնական կյանքում:

Լավագույն ցանկություններով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան